Matenadaran
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts and
“Friends of the Matenadaran” Benevolent Fund
express their gratitude to “JTI ARMENIA” CJSC
for supporting the publication of this book

Մատենադարան
Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և
«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը
երախտագիտություն են հայտնում «ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին
սույն գրքի հրատարակությանն աջակցելու համար

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

МАТЕНАДАРАН
НАУЧНО-ИССЛЕДОВАТЕЛЬСКИЙ ИНСТИТУТ
ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

АРПЕНИК КАЗАРОСЯН

ЦЕНТРЫ КНИГОПИСАНИЯ И РУКОПИСНОЕ НАСЛЕДИЕ ГЕГАМСКОЙ ОБЛАСТИ

ЕРЕВАН 2024

MATENADARAN
RESEARCH INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS
NAMED AFTER MESROP MASHTOTS

ARPENIK GHAZAROSYAN

THE SCRIPTORIA AND MANUSCRIPT LEGACY OF THE REGION OF GEGHAM

YEREVAN 2024

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ
ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐՓԵՆԻԿ ՂԱԶԱՐՈՍՅԱՆ

ԳԵՂԱՄԱ ԵՐԿՐԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ ԵՎ ՁԵՌԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

ԵՐԵՎԱՆ 2024

ՀՏԴ 94(947.25):09
ԳՄԴ 63.3(5Հ)+76.1
Ղ 159

Տպագրվում է Մեսրոպ Մաշտոցի անվան
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիրներ՝ ***Կարեն Մաթևոսյան***
պատմական գիտությունների դոկտոր
Աստղիկ Մուշեղյան
արվեստագիտության թեկնածու

ՂԱԶԱՐՈՍՅԱՆ ԱՐՓԵՆԻԿ

Ղ 159 Գեղամա երկրի գրչության կենտրոնները և ձեռագրական ժառանգությունը / Ա. Ղազարոսյան.- Եր.: Մատենադարանի հրատ., 2024.- 300 էջ և գունավոր ներդիր՝ 16 էջ:

Գրքում ներկայացված են Գեղամա երկրի (Սևանի ավազանի) գրչության կենտրոնների պատմությունը և այնտեղից մեզ հասած ձեռագրական հարուստ ժառանգությունը: Տարածաշրջանում հատկապես մեծ է եղել Սևանավանքի դերը՝ որպես ուսումնագիտական և գրավոր մշակույթի կենտրոն:

Նախատեսված է Հայոց պատմությամբ և մշակույթով զբաղվող մասնագետների և ընթերցող լայն հասարակայնության համար:

ՀՏԴ 94(947.25):09
ԳՄԴ 63.3(5Հ)+76.1

ISBN 978-9939-897-38-7
DOI 10.57155/PQXA3467

© Մատենադարան, 2024
© Ղազարոսյան Արփենիկ, 2024

ՆԱԽԱԲԱՆ

Գրչության կենտրոնները հայկական գրավոր մշակույթի, ձեռագրեր գրելու և պահպանելու, ինչպես նաև վանքերում, մենաստաններում և վարդապետարաններում ստեղծված մատենագրական ժառանգության կենտրոններ են: Միջնադարյան բոլոր կարգի դպրոցները և վանք-մենաստանները, անխտիր, գրչության կենտրոններ էին: Դպրոցներում ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ բոլոր դասագրքերը ձեռագրերն էին, որոնք ընդօրինակվում էին գրչության արվեստի կանոններով: Հմուտ գրիչներ ունենալու մտահոգությամբ՝ նման դպրոցներում գրչության արվեստը դասավանդվում էր ամենայն բծախնդրությամբ: Սակայն գրչության բոլոր կենտրոնները միայն վարդապետարանները չէին, ոչ էլ գրչության արվեստի թեքումով դպրոցները: Գրչատներ կային նաև առանձին վանքերում և բնակավայրերում՝ որպես ձեռագիր ընդօրինակելու ինքնուրույն վայրեր: Միջնադարյան մատենադարաններում ձեռագիր-միավորների հետ պահվում էին ընդօրինակության համար անհրաժեշտ ընտիր գաղափար օրինակներ, որոնք գտնվում էին գրչատներում:

Գրչության կենտրոնները գրչության արվեստը սովորեցնելու, հմուտ գրիչներ, գրչապետներ պատրաստելու դպրոցներ էին, որտեղ գրիչը պետք է սովորեր ձեռագրեր գրել, նկարազարդել, սրբագրել, կազմել և այդ ամենը ուրիշներին սովորեցնել: «…ճարտար գրիչ չի ծնանիր մարդ,- գրում է Հակովբոս Տաշյանը:- Եւ գրչութիւնն այնպիսի եւ ձեւերու այն *միօրինակ**

* Այստեղ և այսուհետ օգտագործված մեջբերումների ընդգծումները հեղինակային են:

կատարելութեան հասցընելու համար՝ անհրաժեշտ էին մշտատեւ վարժութիւնք եւ ուսում կամ կրթութիւն: ...Գրչութեանց՝ ինչպէս նաեւ այն ժամանակներն ընդհանրապէս որեւէ կրթութեան՝ կեդրոններ էին գլխաւորաբար վանքերը: ...Ընդհանրապէս կրնայ միշտ ըսուիլ, որ կրթութեան կենդրոններէն հեռու գտնուող վայրերը՝ ինչպէս ամէն բանի՝ նոյնպէս գրչութեան մէջ միշտ աւելի հին ձեւերը կը պահեն, եւ շատ ուշ տեղի կու տան նորագոյն սովորութեանց»[1]:

Գրչության կենտրոնները միաժամանակ եղել են նաև մշակութային կենտրոններ, որտեղ ձևավորվում, մշակվում և պահպանվում էին ժողովրդի գրավոր մշակույթի ավանդույթները, ձեռագրի ստեղծման հետ առնչվող արվեստները և արհեստները:

Հայ գրչության կենտրոնների պատմության ուսումնասիրությունը հայագիտության կարևոր բնագավառներից մեկն է: «Մեր ազգային ամենամեծ հարստությունը, որ ժառանգություն ենք ստացել մեր հայրերից, ձեռագրերի ժողովածուներն են»,- գրել է Գ. արք Հովսեփյանը[2]: Դա մեր դարավոր նախնիների կերտած ձեռագրերի ստեղծման պատմությունն է, գրի և գրատեսակների գործածման ու զարգացման, ձեռագրերի գրության, սրբագրման, խմբագրման, գեղարվեստական ձևավորման, կազմարարական արվեստի զարգացման, ձեռագրերի օգտագործման պատմությունը:

Դեռևս 19-րդ դարի վերջին, ի նպաստ հայ գրչակենտրոնների պատմության ուսումնասիրման, Հ. Տաշյանն իր կազմած Վիեննայի Մխիթարյան մատենադարանի հայերեն ձեռագրերի հավաքածուի ցուցակը հարստացնում է գրչության վայրերի,

---

[1] **Հ. Յ. վրդ. Տաշեան**, *Ակնարկ մը հայ հնագրութեան վրայ*, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1898, էջ 13-14:

[2] **Գ. Հովսեփյան**, *Գրառում Մատենադարանի տպավորությունների մատյանում*, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. Բ, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1987, էջ 219:

գրիչների և ծաղկողների ցանկերով[3]: Նշանավոր ձեռագրագետ, ակադեմիկոս Լևոն Խաչիկյանը ձեռագրերի հիշատակարաններն արժևորում է նաև գրչության կենտրոնների պատմությանը վերաբերող վկայությունների առկայությամբ. «Ուսումնական հաստատությունների մասին հիշատակարաններում կան բազմաթիվ համարժեք փաստալից տեղեկություններ, որոնք, անշուշտ, նպաստելու են այդ բնագավառի մասին մեր գիտելիքների հարստացման և գրչության կենտրոնների պատմության մութ կողմերի պարզաբանման գործին»[4]: Հայտնի բանասեր Ասատուր Մնացականյանը գրում է. «Հայերեն ձեռագրերի երբեմնի ամբողջության (ընդհանուր հարստության) հարցն անհամեմատ ճիշտ կներկայացվեր, եթե պատշաճորեն ուսումնասիրված լիներ հայ գրչության կենտրոնների պատմությունը: ...Երկրի քաղաքական ու տնտեսական կյանքի թելադրանքով հայ գրչության կենտրոնների մի մասին վիճակված էր երկար, իսկ մի մասին՝ կարճ կյանք...: Դրանցից շատերը միաժամանակ դարձան հայերեն ձեռագրերի առաջին խոշոր հավաքատեղիներն ու մատենադարանները»[5]:

Հայ գրչության կենտրոնների պատմության ուսումնասիրությունը մեծ կարևորություն ունի նաև տվյալ վայրի պատմաճարտարապետական հուշարձանների պատմության հետազոտման գործում, ուստի խնդիրը ձեռք է բերում համընդհանուր մշակութային նշանակություն:

---

[3] *Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա*, կազմեց Հ. Յակովբոս Վ. Տաշեան, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1895, էջ Թ-ԺԲ:

[4] *ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ* (այսուհետև՝ *ԺԴ դ. հիշատակարաններ*, 1950), կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1950, էջ XVII:

[5] **Ա. Մնացականյան**, Առաջաբան. տե՛ս *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի*, հ. Ա (այսուհետև՝ *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց*, հ. Ա), կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաբյան, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1984, էջ Թ:

Մեծ է այդ կենտրոնների պատմության ուսումնասիրության դերը հնագրագիտության և ձեռագրագիտության ոլորտներում առկա բազմազան խնդիրների լուսաբանման գործում, քանի որ «ձեռագրագիտությունը կոչված է ուսումնասիրելու ոչ միայն առանձին ձեռագրեր, այլև ձեռագրական հավաքածուներ, որը թույլ կտա բացահայտելու այն ավանդույթը, որով ստեղծվում է ձեռագիրը և, համապատասխան հատկանիշների բացահայտմամբ, խմբավորել մի տեղում (գրչության կենտրոնում), ուր աշխատել են գրիչն ու նկարիչը, կազմարարն ու սրբագրիչը, բանաստեղծն ու պատմիչը»[6]:

Եվ վերջապես՝ գրչակենտրոնների պատմության ուսումնասիրությունը մի կողմից բացահայտում է միջնադարյան մշակույթի այդ կենտրոնների գործունեությունը, մյուս կողմից՝ օգնում վերականգնելու շատ ձեռագրերի գրչության ժամանակը և վայրը, ճշգրտելու, թե ով է եղել գրիչը, մանրանկարիչը, հեղինակը, խմբագիրը և այլն: Այս ամենը նպաստում է ամբողջացնելու մեր գիտելիքները գրչակենտրոնների մասին և արժևորելու անցյալից մեզ հասած ձեռագրական վիթխարի ժառանգությունը:

Գրչակենտրոնների պատմության ուսումնասիրման առաջին աղբյուրը ձեռագիրն է՝ գրչությամբ և գրանյութով, բովանդակությամբ ու զարդարվածությամբ, գրչով և գրված ժամանակով, ծաղկողով ու ստացողով, կազմարարով ու ընծայողով և, վերջապես, դրանում եղած հիշատակարանով: Ձեռագիրը պատմամշակութային կոթող է, յուրաքանչյուր ժողովրդի պատմական զարգացման արտահայտություններից մեկը, հոգևոր և նյութական մշակույթի հուշարձան, ուստի նրա համակողմանի ուսումնասիրությամբ զբաղվում են հնագրագիտությունը, ձեռագրագիտությունը, բնագրագիտությունը և գրչության ար-

---

[6] **Л. И. Киселева**, *Западноевропейская рукописная и печатная книга XIV-XV вв., кодикологический и книговедческий аспекты*, Ленинград, изд. “Наука”, Ленинградское отд., 1985, стр. 12.

վեստին հարակից այլ գիտություններ, որոնցից յուրաքանչյուրն ունի ուսումնասիրման իր առարկան ու խնդիրները: Ձեռագրագետ Արտաշես Մաթևոսյանը, հիմնվելով իր կազմած «Հայերեն ձեռագրերի համահավաք քարտարանի» տվյալների վրա, վկայում է, որ Հայաստանում և աշխարհի տարբեր երկրներում կա շուրջ 30 հազար հայերեն ձեռագիր՝ գրված մոտ 2000 գրչակենտրոնում[7]:

Գրչության կենտրոնների պատմության ուսումնասիրման երկրորդ աղբյուրը ձեռագրացուցակներն են: Առաջին ձեռագրացուցակները կազմել են Կարապետ արք. Բագրատունին, Խաչիկ վրդ. Դադյանը, հայտնի են նաև տարբեր հեղինակների կազմած՝ Աստրախանի, Տաթևի վանքի և Սևանա անապատի ցուցակները[8]:

Հաջորդ կարևորագույն աղբյուրներն են հայերեն ձեռագրերի հիշատակարանները, որոնք հարուստ նյութ են պարունակում հայ գրչության արվեստի, գրչության դպրոցների ու կենտրոնների, գրի և գրանյութի, գրության ձևերի և այլ փաստերի վերաբերյալ: Հիշատակարանների «Նշխարք պատմութեան Հայոց» առաջին ժողովածուն կազմել է Ղևոնդ Փիրղալեմյանը, որտեղ ամփոփված է ավելի քան հազար հիշատակարան. դրանց մի փոքր մասը հրատարակվել է «Նօտարք Հայոց» խորագրով[9]: Տարիներ անց Լ. Խաչիկյանը հրատարակեց «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Գ. Հովսեփյանը՝ «Յիշատակարանք ձեռագրաց (Ե դարից մինչև 1250 թ.)»[10]

---

[7] **Ա. Մաթևոսյան**, *Հայերեն ձեռագրերի հիշատակարանները միջնադարյան հայ մշակույթի ուսումնասիրության սկզբնաղբյուր*, Երևան, «Վան Արյան» հրատ., 1998, էջ 79:

[8] *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց*, հ. Ա, էջ ԺԳ:

[9] *Նօտարք Հայոց*, հաւաքեալ եւ ի լոյս ածեալ ձեռամբ Ղեւոնդ վարդապետի Փիրղալէմեան Սօրբեցւոյ Վարագայ վանուց վանականի, Կ. Պօլիս, տպագր. Նշան Կ. Պէրպէրեան, 1888: Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), ձեռ. N 6273 և 4515:

[10] **Գարեգին Ա. կաթողիկոս [Յովսէփեան]**, *Յիշատակարանք ձեռագրաց*, հ. Ա, (Ե. դարից մինչեւ 1250 թ.) (այսուհետև՝ *Յիշատակարանք ձեռագրաց*), Անթիլիաս, տպարան Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ, 1951:

ժողովածուները, որոնց հետևեցին՝ Լ. Խաչիկյանի «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ»-ի՝ երեք մասից բաղկացած ժողովածուն[11], Ա. Հովհաննիսյանի և Վ. Հակոբյանի «ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ»-ը՝ երեք հատորով[12], Ա. Մաթևոսյանի «Ե-ԺԲ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ»-ը և «ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ»-ը[13]: Ա. Մաթևոսյանը և Ա. Ղազարոսյանը լրացրել են Լ. Խաչիկյանի «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ»-ի հատորը նոր նյութ-միավորներով[14]: Փաստորեն, արդեն հրատարակվել է հայերեն ձեռագրերի հիշատակարանների տասներկու հատոր:

Հրապարակի վրա են նաև հայերեն ձեռագրերի մեծ և փոքր հավաքածուների մի քանի տասնյակ ձեռագրացուցակ-

[11] *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*, կազմեց Լ. Ս. Խաչիկյան, մասն առաջին (1401-1450 թթ.) (այսուհետև՝ *ԺԵ դ. հիշատակարաններ*, մասն առաջին), Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1955, մասն երկրորդ (1451-1480 թթ.) (այսուհետև՝ *ԺԵ դ. հիշատակարաններ*, մասն երկրորդ), Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1958, մասն երրորդ (1481-1500 թթ.) (այսուհետև՝ *ԺԵ դ. հիշատակարաններ*, մասն երրորդ), Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1967:

[12] *Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601-1620 թթ.)*, կազմեցին՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, հ. Ա (այսուհետև՝ *ԺԷ դ. հիշատակարաններ*, հ. Ա), Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1974, հ. Բ, (1621-1640 թթ.) (այսուհետև՝ *ԺԷ դ. հիշատակարաններ*, հ. Բ), Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1978: *Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1641-1660 թթ.)*, հ. Գ (այսուհետև՝ *ԺԷ դ. հիշատակարաններ*, հ. Գ), կազմեց Վազգեն Հակոբյան, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1984:

[13] *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ.* (այսուհետև՝ *Ե-ԺԲ դդ. հիշատակարաններ*), աշխատասիրությամբ Ա. Ս. Մաթևոսյանի, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 1988: *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դ.* (այսուհետև՝ *ԺԳ դ. հիշատակարաններ*), կազմեց Ա. Ս. Մաթևոսյան, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ. 1984:

[14] *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար*, կազմողներ՝ Լ. Խաչիկյան, Ա. Մաթևոսյան, Ա. Ղազարոսյան, մասն Ա (1301-1325 թթ.) (այսուհետև՝ *ԺԴ դ. հիշատակարաններ*, մասն Ա), Երևան, «Նաիրի» հրատ., 2018, մասն Բ (1326-1350 թթ.) (այսուհետև՝ *ԺԴ դ. հիշատակարաններ*, մասն Բ), Երևան, «Տիգրան Մեծ» տպագրատուն, 2020:

ներ: Շարունակվում է հրատարակվել Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի 11 հազարից ավելի հայերեն ձեռագրերի «Մայր ցուցակ»-ը: Մատենադարանում են գտնվում նաև դրսի հավաքածուներից ձեռք բերված մեկուկես հազար մանրաժապավեններ, լուսանկարներ ու լուսապատկերներ, ինչպես նաև Մատենադարանի հավաքածուների մի մասի ձեռագրերի թվային տարբերակներ:

Գրչության կենտրոնների պատմության ուսումնասիրության աղբյուրներից են նաև վիմագիր արձանագրությունները: Հրապարակի վրա են «Դիվան հայ վիմագրության» շարքի տասը հատորները: Դրանցում երբեմն պարզվում են ձեռագրում հանդիպող հուշարձանների վայրը, կառուցման հանգամանքները, տարեթիվը, միաբաններին ու վանքերին արված նվիրատվությունները և այլն: Գրչության կենտրոնների մասին կարևոր տեղեկություններ կան նաև հայ մանրանկարչությանը նվիրված առանձին ուսումնասիրություններում, ինչպես նաև մատենագրական մի շարք աղբյուրներում:

Հայ գրչության կենտրոնների պատմության ուսումնասիրության հիմնական նպատակն է բացահայտել հայ ժողովրդի ազգային գրավոր հարուստ ժառանգության՝ ձեռագրերի ստեղծման հանգամանքները: Այսինքն՝ այն միջավայրը, որտեղ գրվել են ձեռագրերը, այն արհեստներն ու հմտությունները, որոնց գործածությամբ հայ գրիչները, մանրանկարիչները և կազմարարները վերջնական և ավարտուն են դարձրել ձեռագիր մատյանները: Գրչության կենտրոնների պատմության ուսումնասիրողն ամենից առաջ պետք է արժևորի ձեռագիրը ստեղծողների՝ գրանյութ պատրաստողների, գրիչների, մանրանկարիչների, սրբագրող գիտնական վարդապետների՝ «քաջ քարտուղարների», հմուտ կազմարարների և նորոգողների նվիրական գործունեությունը, անդրադառնա ձեռագրերի բովանդակային, ինչպես նաև առանձին նյութ-միավորների

խմբագրման խնդիրներին, գրչակենտրոններում ստեղծված ձեռագրերի՝ ճակատագրով պարտադրված տեղափոխումներին:

ՀԱՅ ԳՐՉՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱՎՈՐ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Հայոց գրերի գյուտին համընթաց՝ Մեսրոպ Մաշտոցը Սամոսատում, աջակից ունենալով Հռոփանոս գրչության արվեստի գիտակին, մշակեց նաև նորաստեղծ գրերի գործածման մասին գիտության սկզբունքները՝ հայ գրչության արվեստը: Հայաստան վերադառնալուց հետո Վաղարշապատում՝ Հայոց Վռամշապուհ թագավորի հովանավորությամբ, Մաշտոցը հիմնեց հայ առաջին դպրոցը: Սկզբնական շրջանում Վաղարշապատի նորաստեղծ դպրոցի գրչատան գրիչները կատարում էին Սուրբ Գրքի ընդօրինակումներ, որոնց մի մասը դառնում էր Հայաստանի տարբեր գավառների վանքերի և եկեղեցիների սեփականությունը: Այնուհետև Մաշտոցը դպրոցներ հիմնեց Հայաստանի այլ վայրերում: Նորաբաց դպրոցները նաև ձեռագրերի ստեղծման և բազմացման գրչատներ էին, գրչության կենտրոններ: 5-րդ դարի պատմիչ Ղազար Փարպեցին գրում է. «...կարգեցան ... յայնմհետէ դպրոցք հօտին, բազմացան դասք գրչաց»[15]: Գրչության արվեստն ավանդվում էր մեծ բծախնդրությամբ և խնամքով, ըստ այդմ, դառնում որոշ դպրոցներում ուսուցանվող հիմնական մասնագիտություններից մեկը:

Գրչության կենտրոնների մասին մեզ հասած վկայություններից հնագույնը պահպանվել է «Աւրհնութիւնաբեր ցուցակում»: Այստեղ հիշվում է Հռիփսիմյան վկայարանում Սահակ Պարթևի կողմից ծիսական կանոնների՝ Քահանաօրհնեքի,

[15] *Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան*, Թիֆլիս, ելեքտրաշարժ տպարան օր. Ն. Աղանեանի, 1907, էջ 35-36:

Քահանայաթաղի, Աշխարհաթաղի և Ժամագրքի Գիշերապաշտման կանոնի մեջ մտնող չորս քարոզների ու աղոթքների ստեղծման մասին: Սահակ Պարթև կաթողիկոսը նաև հմուտ գրիչ է եղել: Հենց Հռիփսիմեի վկայարանում նա ընդօրինակել է յոթ Ավետարան. «Իսկ Քահանաաւրհնէսն սրբոյն Սահակայ գծեալ՝ յետ ԻԱ (21) ամի արքեպիսկոպոսութեան իւրոյ, ի Նաւասարդի ամսոյ, որ աւր մի էր, և ի Քահանայաթաղն այլ աւէլ է (7) Աւետարան: Նոյնպէս և զԱշխարհաթաղն՝ ի Քաղաքուդաշտի, ի վկայարանս Սրբոյն Հռիփսիմեանցն: Եւ յետ սրբոյն Գրիգորի ՃԺԱ (111) ամին մինչև ցայն վայր հնովն վարէին: Արար սուրբ Սահակ և զԴ (4) քարոզսն զԳիշերւոյ և զնոցին աղաւթսն»[16]:

Սահակ Պարթևի ընդօրինակած այդ յոթ Ավետարանները մեզ չեն հասել, սակայն դրանցից մեկը գաղափար օրինակ է ծառայել Գևորգ գրչի 1113 թվականին Դրազարկում ընդօրինակած Ավետարանի[17], մյուսը՝ Գրիգոր գրչի 1617 թվականին Քյոթահիայում արտագրած Ավետարանի համար[18]:

Հավանաբար, Վաղարշապատում Մաշտոցն ընդօրինակել է այն Ավետարանը, որը 10-րդ դարում պատկանել է Անանիա Նարեկացուն և պահվել Նարեկավանքում: Որպես թարգմանչագիր հնագույն ձեռագիր՝ այն գաղափար օրինակ է ծառայել Երևանի Մատենադարանի (այսուհետև՝ ՄՄ) N 10434 Ավետարանի համար՝ գրված 1069 թվականին[19]: «Աւրհնութիւնաբեր ցուցակում» վկայություն կա նաև Մովսես Խորենացու գրչական գործունեության մասին. «Երանելին Մովսէս թարգ-

[16] *Ե-ԺԲ դդ. հիշատակարաններ*, էջ 339: Քահանաօրհնեքի, քահանայաթաղի և աշխարհաթաղի կանոնները հետագայում՝ 9-րդ դարում վերջնական խմբագրված «Մաշտոց» ծիսական ժողովածուի մաս են կազմել, տե՛ս **Ա. Ղազարոսյան**, «Մաշտոց Եղվարդեցի կաթողիկոս», *Էջմիածին*, 1991, Ա-Գ, էջ 116:

[17] *Ե-ԺԲ դդ. հիշատակարաններ*, էջ 142:

[18] *ԺԷ դ. հիշատակարաններ*, h. Ա, էջ 636:

[19] *Ե-ԺԲ դդ. հիշատակարաններ*, էջ 107:

մանից, որ էր գրիչ սրբոյն Սահակայ, որդւոյ սրբոյն Ներսիսի»[20]: Նշված փաստերը վկայում են Վաղարշապատում հայ գրչության ամենաhին կենտրոնի, ինչպես նաև ամենաhին մատենադարանի գոյության մասին: Հնագույններից է նաև Արշարունյաց դպրոցի գրչության կենտրոնը, որ հիմնել էին Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի աշակերտներ Թաթուլը և Վարոսը, որ «զգրչութեան արուեստ ունէին և զՍուրբ Գիրսն յաւրինէին որք էին երեսուն և վեց վարդապետք»[21]:

Գրչության կենտրոններ Հայաստանում եղել են նաև 7-8-րդ դարերում: Նշանավոր են Շիրակի, Սյունյաց, Մաքենիսի վարդապետարանների գրչատները, որտեղ ընդօրինակվել են Շիրակացու դասագիրքը՝ «Քննիկոնը» և տիեզերագիտական ու տոմարագիտական բոլոր գործերը, Մովսես Քերթողի մեկնությունները և Սողոմոն Մաքենացու՝ 747 թվականին Մաքենիսում կազմած «Տոնական» ժողովածուի ընդօրինակությունները: Այս գրչակենտրոններում են կազմվել, խմբագրվել և սրբագրվել այդ գործերի կատարյալ ընտիր և ստույգ օրինակները, որոնցից ավելի ուշ արտագրվել և մեզ են հասել այդ նշանավոր երկերը:

9-րդ դարի Հայաստանի մեծ և փոքր բարձր տիպի դպրոցների մեջ առաջատարը Սևանի վարդապետարանն էր: Ուսուցչապետ Մաշտոց Եղիվարդեցին ոչ միայն ձեռագրեր է ընդօրինակել տալիս, դասագրքեր գնում և հարստացնում կղզու մա-

---

[20] *Ե-ԺԲ դդ. հիշատակարաններ,* էջ 338: «Աւրհնութիւնաբեր ցուցակին» անդրադարձել է Ղ. Ալիշանը՝ քննության առնելով յուրաքանչյուր կանոնը և տալով համապատասխան ծանոթագրություններ. տե՛ս **Հ. Ղ. Վ. Մ. Ալիշան**, *Հայապատում. պատմիչք և պատմութիւնք Հայոց*, հ. Ա (այսուհետև՝ **Ալիշան**, *Հայապատում*, հ. Ա), Վենետիկ - ի վանս Ս. Ղազարու, 1901, էջ 188-189: «Աւրհնութիւնաբեր ցուցակի» մասին տե՛ս նաև **Ա. Արևշատյան**, *«Մաշտոց» ժողովածուն որպես հայ միջնադարյան մշակույթի հուշարձան*, Երևան, Հայաստանի ԳԱ հրատ., 1991, էջ 19-24:

[21] *Յիշատակարանք ձեռագրաց*, էջ 3: *Ե-ԺԲ դդ. հիշատակարաններ*, էջ 12, ծնթ. 3:

տենադարանը, այլև Մաքենիսի դպրոցի նշանավոր վարդապետ Սողոմոն Մաքենացուն հետևելով՝ խմբագրում է կրոնական ծիսական կանոնների ժողովածուն, որն ըստ որոշ աղբյուրների՝ իր անունով կոչվել է «Մաշտոց»[22]:

10-11-րդ դարերում Հայաստանում բազմանում են վանական ուսումնական կենտրոնները: Կամրջաձորի, Նարեկավանքի, Հնձուց և Հաղպատի վանքերում դպրոցներ են բացում Բյուզանդական կայսրությունից հեռացած հայ հոգևորականները: Նոր կենտրոններ են բացվում նաև Վասպուրականում, Այրարատում, Սյունիքում, Արցախում, Գուգարքում, Բարձր Հայքում և այլուր:

Համեմատելով նախորդ դարերի տարբեր գրչության կենտրոններից մեզ հասած հազվագյուտ ձեռագրերը, ինչպես նաև գրչավայրերն անհայտ ձեռագրերը 10-11-րդ դարերի ձեռագրերի հետ՝ ակներև է դառնում, որ գրչության արվեստը Հայաստանում զգալի առաջընթաց էր արձանագրել: Գրչության, ընդօրինակման արվեստում տեղի էին ունեցել արմատական փոփոխություններ: Մագաղաթի՝ որպես ժամանակի միակ գրանյութի հետ զուգընթաց, սկսել են օգտագործել նաև թուղթը, որը լինելով ավելի էժան, հետագայում ավելի լայն կիրառություն է ստացել: Ձեռագրերում պաշտոնական երկաթագիր տառատեսակների հետ գրչության գիր է դարձել բոլորգիրը, քանզի դրանով գրելն ավելի դյուրին էր և այն ավելի քիչ տեղ էր զբաղեցնում: Բացի այդ, ընդօրինակություններում հին կետադրության հետ մեկտեղ կիրառվել են նոր՝ ավելի ժամանակակից նշաններ: Զգալի փոփոխություններ են կատարվել նաև ձեռագրերի նկարազարդման արվեստում: Եթե մինչև 10-րդ դարը ձեռագրերը, մասնավորապես Սուրբ Գիրքը, նկարա-

---

[22] **Կիրակոս Գանձակեցի**, *Պատմություն Հայոց* (այսուհետև՝ **Գանձակեցի**, *Պատմություն*) աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1961, էջ 81:

զարդվում էին խորաններով և ավետարանիչների պատկերներով (բացառություն են կազմում 10-րդ դարի «Էջմիածնի Ավետարանի» վերջում այլ ձեռագրից կցված 6-րդ դարի մանրանկարները և նույն դարի «Վեհափառի Ավետարանի»՝ 6-րդ դարի գաղափար օրինակի վաղագույն մանրանկարների ճշգրիտ ընդօրինակությունները), ապա 10-րդ դարից սկսած Ավետարանները («Ծուղրութի», 974 թ., «Էջմիածնի», 989 թ.), Աստվածաշունչ մատյանները և այլ բնույթի ձեռագրեր զարդարվում են գունեղ գլխազարդերով, լուսանցազարդերով և Տերունական պատկերներով: 11-րդ դարից սկսած, Ավետարանների և Աստվածաշունչ մատյանների նկարազարդման մեջ իր հաստատուն տեղն է գտել Տերունական պատկերների շարքը՝ Փրկչի Ծննդից մինչև Խաչելություն, Հարություն և Համբարձում: Վերոբերյալ դյուրացումները հնարավորություն են ստեղծել բազմապատկելու ինչպես կրոնական, այնպես էլ նոր հանդես եկող աշխարհիկ բնույթի ձեռագրերի քանակը, ավելացնելու դրանց ընթերցողների թիվը:

Բագրատունիների թագավորության և Զաքարյան իշխանների տիրապետության տարիներին ավելի է մեծանում դպրոցների և գրչության կենտրոնների թիվը, հանդես են գալիս գրչության արվեստը կատարելագործող գիտնական-վարդապետներ: Հովհաննես Սարկավագը Հաղպատի մատենադարանում պահվող թարգմանչագիր օրինակի հիման վրա կարգավորում, սրբագրում է Սաղմոսարանի գաղափար օրինակը: Մինչ այդ, Գրիգոր Մուրղանեցի գրիչը կարգավորել, սրբագրել էր Ավետարանի բնագիրը, իսկ Գրիգոր Վկայասեր կաթողիկոսը նոր ընթերցվածներ էր մտցրել «Ճաշոց» ծիսական ժողովածուի մեջ և խմբագրել, ստեղծել էր «Տոնամակ» ժողովածուն՝ «Յայսմաւուրք»-ի նախնական խմբագրությունը:

11-րդ դարում Կիլիկիայի հայկական թագավորությունում, Գրիգոր Վկայասեր կաթողիկոսի անմիջական հսկողությամբ,

դպրոցներ և գրչատներ են բացվում Սև լեռան մի քանի վանքերում: Ծաղկում են ապրում Դրազարկի, Սկևռայի, Մեծքարի, Արքակաղինի դպրատները: Ձեռագրի գրչության ձևերը կարգավորելու համար 12-րդ դարում Արիստակես Գրիչը մշակում է գրչության արվեստի քերականության տեսությունը, որը հետագայում կատարելագործվում է Գևորգ Սկևռացու (13-րդ դար) և այլ քերականների ջանքերով[23]: Արիստակես Գրչի և Գևորգ Սկևռացու հեղինակած քերականական աշխատությունները գրչության արվեստի ուղղագրության դասագրքեր էին:

Գրչության արվեստը շարունակում է զարգանալ նաև հետագա դարերում: 13-14-րդ դարերում Հայաստանում հայտնի էին Նոր Գետիկի, Խորանաշատի, Երզնկայի Ավագ վանքի, Խոր Վիրապի գրչության կենտրոնները: Վարդան Արևելցին Խոր Վիրապի իր վարդապետարանը նոր դասագրքերով հարստացնելու նպատակով գրում է աշխարհագրության, հայոց պատմության դասագրքեր, «Ժղլանքը»՝ պատճառների, լուծմունքների հանրագիտարանային ժողովածուն և զանազան քաղվածո մեկնություններ, որոնք հորինվում էին գրչության կանոններին համապատասխան:

Վարդան Արևելցու մահից հետո Հայոց վարդապետարանը, Ներսես Մշեցու ղեկավարությամբ, Խոր Վիրապից տեղափոխվում է Մշո Առաքելոց վանք: Այստեղ ևս գրչության արվեստը դասավանդվում էր ամենայն խորությամբ և խստությամբ, իսկ ընդօրինակությունները կատարվում էին Ներսես Մշեցու տաղանդավոր աշակերտ Եսայի Նչեցու հսկողությամբ: 1282 թվականին Ներսես Մշեցին իր աշակերտների հետ տեղափոխվում է Վայոց ձոր և Պռոշյան իշխանների հովանավորությամբ Գլա-

[23] **Լ. Խաչերյան**, *Գրչության արվեստի լեզվական-քերականական տեսությունը միջնադարյան Հայաստանում* (ուսումնասիրություն և բնագրեր), Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1962, էջ 13:

ծորում հիմնում համալսարան: Այստեղ գրչության արվեստի ուսուցիչ Եսայի Նչեցին գրում է այդ արվեստի դասավանդման համար անհրաժեշտ դասագիրքը՝ «Մեկնութիւն քերականին» և այլ ձեռնարկներ[24]: Գլաձորի համալսարանի գրչակենտրոնում հատուկ մանրանկարչական դպրոց է հիմնում Թորոս Տարոնացի գրիչ-մանրանկարիչը, որը համալսարանում դասավանդում էր նաև գրչության արվեստ:

14-րդ դարի վերջին բացվում է Տաթևի համալսարանը: Րաբունապետ Գրիգոր Տաթևացին կատարելագործում է միջնադարյան համալսարանի ուսումնական ծրագիրը, որում մեծ ուշադրություն էր դարձվում գրչության արվեստի դասավանդմանը: Այդ նպատակով 1407 թվականին նա Մեծոփավանքում ստեղծում է գրչության բարձր տիպի վարդապետարան, որի համար գրում է Արիստակես Գրչի և Գևորգ Սկևռացու գրչության արվեստի դասագրքերի մեկնությունները, որոնցով ամբողջանում և վերջնական տեսքի են բերվում գրչության ուղղագրական կանոններն ու ընդօրինակման սկզբունքները: Խորասանի շահ Շահռուխի երրորդ արշավանքի ժամանակ՝ 1435 թվականին, ավերվում է նաև Տաթևի վանքը, և նրա միաբանության անդամներն ապաստան են գտնում Հայաստանի տարբեր վայրերում: Բնականաբար, փակվում է նաև Տաթևի համալսարանը: 15-րդ դարի 50-ական թվականներին Հայոց վարդապետարանը հաստատվում է Սևանա կղզում՝ Դանիել րաբունապետ Սևանցու գլխավորությամբ[25]:

[24] **Ա. Ղազարոսյան**, «Գլաձորի համալսարանի գրիչները և ձեռագրերը», *Լրաբեր հասարակական գիտությունների*, 1984, N 3, էջ 58-66:

[25] **Ա. Ղազարոսյան**, «Դանիել րաբունապետը և Սևանի դպրոցը», *Պատմաբանասիրական հանդես*, 1986, N 3, էջ 99-107:

* * *

Հայ գրչության կենտրոններին՝ որպես ձեռագրերի ստեղծման, հայ գրչության արվեստի մշակման, հոգևոր արժեքների ստեղծման վայրեր, առաջին անգամ անդրադարձել է մեծ հայագետ Գարեգին Հովսեփյանը «Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ» եռահատոր աշխատությունում: Դրա երկրորդ՝ «Հոգեւոր կեդրոններ եւ Գլաձորի բարձր դպրոցը Պռոշեանց իշխանութեան մէջ» հատորում Գ. Հովսեփյանը ներկայացրել է Պռոշյան իշխանական տան հովանավորչական գործունեությունը՝ ուղղված հայ մշակույթի, եկեղեցաշինության, կրթության ու գիտության զարգացմանը: Հեղինակը հանգամանորեն ուսումնասիրել է Վայոց ձորի հոգևոր կենտրոնները, դրանց կրթական գործունեությունը, ինչպես նաև այնտեղ ստեղծված ձեռագրական ժառանգությունը: «Գլաձորի բարձր դպրոցը կամ «համալսարան»ը» գլխում Գ. Հովսեփյանը առաջին անգամ ըստ ամենայնի քննության է առել հայ միջնադարյան առաջին համալսարանի տեղի, ստեղծման ժամանակի, ուսումնական ծրագրի, մասնավորապես՝ մատենագրական և ձեռագրական ժառանգության հարցերը[26]:

Հետազոտելով հոգևոր կենտրոնների ձեռագրական նյութը՝ Գարեգին Հովսեփյանն անդրադարձել է գրչության արվեստին վերաբերող մի շարք հարցերին՝ ընդօրինակության գաղափար օրինակին, ձեռագիրը գրողին, ստացողին, սրբագրությանը, մանրանկարչական արվեստի նրբություններին, գրանյութին, կազմարարությանը, ինչպես նաև մատենադարաններին: «Մեր գրչութեան հարուստ արուեստը իւր պատմութեամբ, գրեթէ խոպան, անմշակ վիճակի մէջ է, եթէ չյիշենք Տաշեանի «Ակ-

[26] **Գ. Կաթողիկոս Յովսէփեան**, *Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ*, Բ. հրատարակութիւն, Անթիլիաս-Լիբանան, տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1969, էջ 155-296:

նարկ մը հայ հնագրութեան վրայ» գործը,- գրում է Գ. Հովսեփյանը: ...Գրչութեան արուեստի և նորա Յիշատակարանների ընդհանուր ծանօթութիւնը միայն հայ մշակոյթի մի նոր աշխարհ է բանում մեր առաջ: ...Եւրոպական նման գործերի հետեւողութեամբ պատրաստել ենք Գրչութեան Արուեստի պատմութիւնը եւ աշխատել ենք ամփոփ տեղեկութիւն տալ նորա ծագման եւ զարգացման ընթացքի մասին, այսինքն, նիւթերի պատրաստութեան՝ մագաղաթի, թղթի, թանաքների, նկարչական գոյների, գրիչների, դպրոցների, հովանավորների... եւ առ հասարակ այդ արուեստի հետ կապ ունեցող երեւոյթների մասին»[27]: Այսպիսով, Գարեգին Հովսեփյանն ուղենշում է, որ գրչության կենտրոնների պատմության ուսումնասիրությունը ոչ միայն յուրաքանչյուր գրչակենտրոնում ստեղծված ձեռագրական ժառանգության, այլև ձեռագրի ստեղծման, գրչության արվեստի համակարգի բոլոր բաղադրիչների՝ գիտության, արվեստի, արհեստների և հմտությունների ամբողջության ուսումնասիրությունն է:

Գրչության արվեստին է անդրադարձել նաև ակադեմիկոս Բաբկեն Առաքելյանը 9-13-րդ դարերի Հայաստանի քաղաքներին ու արհեստներին նվիրված երկհատորյակում, որտեղ հատուկ գլուխ է հատկացրել գրքի և գրչության հետ կապված արհեստներին[28]:

Հայ գրչության կենտրոնների ուսումնասիրության հիմնական գիտական հաստատությունն, անշուշտ, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ Մատենադարանն է, որտեղ ոլորտին նվիրված աշխատանքները սկսվել են 20-րդ դարի 60-ական թվականներին: Նշանավոր ձեռագրագետ, Մատենադարանի տնօրեն Լևոն

---

[27] *Յիշատակարանք ձեռագրաց*, էջ ԺԵ-ԺԶ:

[28] **Բ. Առաքելյան**, *Քաղաքները և արհեստները Հայաստանում IX-XIII դդ.*, հ. Ա, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1958, էջ 303-321:

Խաչիկյանը, նախանշելով իր ղեկավարած գիտահետազոտական ինստիտուտի գործունեության հիմնական ուղղությունները, հույժ կարևոր է համարել, որ ձեռագրերի պահպանության, ձեռագրացուցակների կազմման, մատենագրական ժառանգության՝ քննական բնագրերի հրատարակմանը զուգընթաց, Մատենադարանի աշխատակիցները զբաղվեն նաև հայ գրչության կենտրոնների ուսումնասիրությամբ: Ուստի և այդ գործը հանձնարարել է երիտասարդ գիտնական Արտաշես Մաթևոսյանին, որն իր աշխատանքը կանոնակարգելու և դյուրացնելու համար կազմել է «Հայերեն ձեռագրերի համահավաք քարտարանը» (դեռևս անտիպ)՝ ոչ միայն քարտագրելով Երևանի Մատենադարանի, Էջմիածնի Մայր Աթոռի և մյուս երկրներում առկա հայերեն ձեռագրերը (որպես հիմք ընդունելով դրանց հավաքածուների ձեռագրացուցակների տվյալները), այլև ձեռագրերի մասին տեղագրական, ուղեգրական և այլ տեղեկություններ պարունակող գրականությունը:

Քարտարանի ավելի քան 35 հազար քարտերը (կան ձեռագրեր, որոնք նկարագրվել են մի քանի անգամ՝ տարբեր ուսումնասիրողների կողմից և, բնականաբար, դրանց քարտերի թիվը մեկից ավելի է) դասավորված են ըստ գրչության կենտրոնների՝ այբբենական կարգով, իսկ յուրաքանչյուր կենտրոնի ձեռագրերը՝ ըստ ժամանակագրության: Գրչության տեղն անհայտ ձեռագրերի քարտերը, որոնք կազմում են բոլոր քարտերի գրեթե կեսը, դասավորված են ըստ գրության թվականների: Քարտարանի կազմումից հետո պարզ դարձավ, որ մեզ հայտնի բոլոր ձեռագրերն ու վկայությունները գրվել են ոչ միայն պատմական Հայաստանի և Կիլիկիայի տարածքում, այլև աշխարհի տարբեր երկրներում՝ Մանչեստրից մինչև Ջակարտա, Սանկտ Պետերբուրգից մինչև Կահիրե: «Հայերեն ձեռագրերի համահավաք քարտարանի» տվյալների հիման վրա Արտաշես Մաթևոսյանը կազմել է նաև երկու թեմատիկ՝ Հա-

յաստանի և Կիլիկիայի գրչության կենտրոնների և արտերկրի գրչության կենտրոնների քարտեզներ[29]: Քարտեզներում պայմանական նշաններով նշված են գրչակենտրոններից մեզ հասած ձեռագրերը՝ մինչև տասը, հիսուն, հարյուր և ավելի ձեռագրեր: Ա. Մաթևոսյանը հոդվածներ է հրատարակել Մոկաց Սարի Ս. Գևորգ վանքի, Լիմ անապատի, Սանահինի, Հաղպատի, Երևանի, Մեծոփավանքի, Գլաձորի, Անիի և այլ գրչության կենտրոնների մասին, իսկ 1970 թվականին պաշտպանել է «Մեծոփավանքի գրչության կենտրոնը 12-15-րդ դդ.» ատենախոսությունը:

Հետագայում գրչության կենտրոնների պատմությունը ատենախոսության թեմա է դարձել նաև այլ հետազոտողների համար՝ «Մշո Առաքելոց վանքի գրչության կենտրոնը» (Հենզել Մանուչարյան)[30], «Անի քաղաքի գրչության կենտրոնը» (Կարեն Մաթևոսյան)[31], «Գեղամա երկրի գրչության կենտրոնները (8-19-րդ դարեր)» (Արփենիկ Ղազարոսյան), «Սկևռայի գրչության կենտրոնը» (Հասմիկ Բադալյան)[32], «Վանա լճի Աղթամար, Լիմ և Կտուց վանքերի գրչության կենտրոնները» (Լուսինե Թումանյան)[33]: Հրատարակվել են նաև այլ ուսումնասիրություններ, որոնց թվում են Թամարա Մինասյանի՝ Արցախի[34] և Ուտիքի[35] գրչության կենտրոններին նվիրված աշխատություն-

---

[29] Այդ քարտեզները տեղադրված են Մատենադարանի թանգարանային մասնաշենքի գլխավոր սրահի մուտքի երկու կողմերում:

[30] **Հ. Մանուչարյան**, *Պողոս Տարոնացի. Առաքելոց վանքի գրչության դպրոցը*, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1982:

[31] **Կ. Մաթևոսյան**, *Անի. եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը*, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1997:

[32] **Հ. Բադալյան**, *Սկևռայի գրչության կենտրոնը*, Երևան, «Նաիրի», 2013:

[33] **Լ. Թումանյան**, *Վանա լճի կղզիների գրչության կենտրոնները*, Երևան, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, 2019:

[34] **Թ. Մինասյան**, *Արցախի գրչության կենտրոնները*, Երևան, «Նաիրի», 2015:

[35] **Թ. Մինասյան**, *Ուտիքի գրչության կենտրոնները*, Երևան, «Մատենադարան» հրատ., 2020:

ները, ինչպես նաև Արսեն Հարությունյանի՝ Հարանց Մեծ անապատի[36] և Երևանի[37] գրչակենտրոններին նվիրված հոդվածները: Այսօր էլ Մատենադարանի գիտաշխատողները շարունակում են զբաղվել գրչության կենտրոնների ուսումնասիրությամբ:

ՄՄ, ձեռ. 7869, թ. 106ա

[36] **Ա. Հարությունյան**, Հալիձորի Հարանց կամ Տաթևի նախկին Մեծ անապատը՝ գրչության կենտրոն, «Երիտասարդական 3-րդ գիտաժողովի զեկուցումներ» (Երևան, 2017, նոյեմբերի 28-30), «Արմավ» հրատ., Երևան, 2018, էջ 316-342:

[37] **Ա. Հարությունյան**, «Հին Երևանի և ներկա արվարձանների եկեղեցիներն իբրև գրչության կենտրոններ», *Բանբեր Մատենադարանի*, N 30, 2020, էջ 454-478: